



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

26 նոյեմբերի 2015 թվականի N 52

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժառայու-
թյունների որակի ապահովման ռազմավարությունն ապահովող միջոցառումների ցանկին՝
համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. նոյեմբերի 27
Երևան



Հավելված
 ՀՀ կառավարության 2015 թ.
 նոյեմբերի 26-ի նիստի N 52
 արձանագրային որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Համակատարող	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսավորման աղբյուրը	Վերստուգելի չափանիշ
1. Բժշկական օգնության և սպասարկման տեսակների մակարդակների հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2016-2018թթ	Բժշկական օգնության և սպասարկման տեսակների մակարդակների սահմանում՝ ըստ տեխնիկատեխնոլոգիական և մասնագիտական որակավորման պարտադիր պահանջների ու պայմանների հագեցվածության աստիճանի:	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ առողջապահության նախարարի բժշկական օգնության և սպասարկման տեսակների մակարդակների հաստատելու մասին հրամանի առկայություն
2. Կլինիկական ուղեցույցների հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2016-2018թթ	Բուժաշխատողների կողմից կլինիկական կոնկրետ դեպքի համար որոշումներ կայացնելուն աջակցող	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում	Նշված ժամկետում առնվազն 15 կլինիկական ուղեցույցների ներդրում

				Ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը ներառող ուղեցույցների առկայություն և որպես արդյունք բժշկական օգնության և սպասարկման որակակական ցուցանիշների բարելավում		բժշկական կազմակերպություններում
3. Պացիենտի վարման գործելակարգի հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2016-2018թթ	բուժաշխատողի կողմից հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարմանը՝ խորհրդատվությանը, ախտորոշմանը, բուժմանը ներկայացվող պարտադիր պահանջներ առկայություն և որպես արդյունք հիվանդների վարման ընթացակարգերի միասնականացում, բժշկական օգնության որակի բարելավում	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում	Նշված ժամկետում առնվազն 5 գործելակարգերի ներդրում
4. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործունեության ընթացակարգի ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատում:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2016-2018թթ	Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացին ներկայացվող պարտադիր պահանջների սահմանում և բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում	Նշված ժամկետում առնվազն 5 ընթացակարգերի ընդունում և ներդրում

				սպասարկման կազմակերպման կանոնակարգում		
5. Մասնագիտական բնութագրերի հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատում:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2016թ.	Առողջապահության բնագավառի մասնագիտություններից յուրաքանչյուրի ընդհանուր նկարագիրը, մասնագետի տեսական և գործնական գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ունակությունների, ինչպես նաև մասնագիտական իրավունքների, պարտականությունների և գործառույթների ծավալի սահմանում և որպես արդյունք բուժաշխատողների մասնագիտական գործունեության և իրավասությունների շրջանակի հստակեցում	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում	Նշված ժամկետում առնվազն 6 բնութագրերի ընդունում և ներդրում
6. Բուժճառայությունների որակի ապահովման և բարելավման միասնական տեղեկատվական համակարգի մատչելիության ապահովում:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		Էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրմանը զուգահեռ	Հիվանդանոցային բուժճառայությունների որակի վերաբերյալ նոր սահմանվելիք տվյալների հնարավորինս ինտեգրում Ե-ՀՈՍՓ (E-HOSP) համակարգում	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում	Նշված ժամանակահատվածում Էլեկտրոնային տվյալների բազայի ամբողջական ներդրում
7. Ներհիվանդանոցային վարակների առկա	Հայաստանի Հանրապետության	Երևանի քաղաքապետ	2016-2018թթ	Ներհիվանդանոցային վարակների վերահսկմանն	ՀՀ պետական բյուջեից	Տարեկան առնվազն 2 բժշկական

<p>խնդիրների, կանխարգելման հարցերի, գնահատումների և նոր մոտեցումների ներդրման մշտադիտարկում</p>	<p>առողջապահության նախարարություն</p>	<p>արան/համաձայնությամբ/ ՀՀ մարզպետարաններ</p>		<p>ու կանխարգելմանն առնչվող կանոնակարգող իրավական ակտերի կանոնավոր վերանայում, գործիքների սահմանում և ըստ անհրաժեշտության թարմացում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>կազմակերպություններում մոնիտորինգի իրականացում</p>
<p>8. Բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների արդիական մակարդակի ապահովում և շարունակական կատարելագործում</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>	<p>շարունակական</p>	<p>Կրթական ծրագրերի շարունակական արդիականացում, գործնական հմտությունների զարգացման շեշտադրում բժշկական կրթության հետբուհական փուլում և շարունակական մասնագիտական զարգացման ընթացքում: Հետբուհական կրթության փուլում պարտադիր յուրացման ենթակա գործնական հմտությունների ցանկի սահմանում և նրանց ձեռքբերման վերահսկողության մեխանիզմների ներդրում/օրագրեր, հաշվետվություններ և այլն/: Կլինիկական օրդինատորների ավարտական պետական քննության ընթացքում տեսական գիտելիքների և գործնական հմտությունների</p>	<p>ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>Շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգի և բժիշկ_մասնագետների նոր որակավորման բնութագրերի հիման վրա հետբուհական կրթության նոր կրթական ծրագրերի ներդրում:</p>

				<p>փաստացի ստուգման միջազգայնորեն ընդունված մեխանիզմների մշակում և ներդրում:</p> <p>Շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտային համակարգի ներդրում, տեսական գիտելիքների և գործնական հմտությունների պարտադիր զուգահեռ զարգացման համապատասխան մեխանիզմների ապահովմամբ:</p>		
<p>9. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում</p>	<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p>		<p>2017թ.</p>	<p>Օրենքով որակի ապահովման հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգի սահմանում</p>	<p>ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>Օրենքով սահմանված կարգով շրջանառված օրենքի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն</p>

